

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՄՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպերն աստիճանաբար արագանում են՝ նախորդ տարվա բազայի ազդեցության աստիճանաբար չեզոքացման, ինչպես նաև նախորդ ամիսներին խոշոր անկումներ գրանցող արդյունաբերության ոլորտի աստիճանական վերականգնման պայմաններում: Արդյունքում տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) 2025թ. հուլիսին կազմել է 9.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով, իսկ հունվար-հուլիս ամիսների կուտակային աճի ցուցանիշը կազմել է 7.0%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2025թ. հունվար-հուլիս ամիսների ՏԱՑ-ի աճին շարունակում է ամենամեծ նպաստումն ունենալ ծառայությունների աճը՝ շուրջ 2.5 տոկոսային կետով: Առևտրի և շինարարության ոլորտները նույնպես դրական նպաստում են ունեցել ՏԱՑ-ին՝ համապատասխանաբար 1.7 և 1.0 տոկոսային կետով:


¹ ՏԱՑ-ի նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-հուլիսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում հուլիսին, ընթացիկ տարվա մեջ առաջին անգամ, գրանցվել է դրական աճի ցուցանիշ, սակայն կուտակային աճը դեռևս բացասական է: 2025թ. հուլիսին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 4.2% աճ, որի հաշվին հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը մեղմվել է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ շուրջ 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 9.8%:

Արդյունաբերության անկումը 2025թ. հունվար-հունիս ամիսներին² հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 19.1% անկմամբ, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 13.6 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում սկսել է գրանցվել դրական աճ, որի չափը, սակայն, փոքր է եղել՝ շուրջ 0.6% և ընդհանուր արդյունաբերության անկմանը հակազդել է 0.1 տոկոսային կետով: Արդյունաբերությանը դրական նպաստում է ունեցել «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ 1.4 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի նպաստումը շարունակել է լինել գրեթե զրոյական:


Մշակող արդյունաբերության անկումը հիմնականում պայմանավորված է «հիմնական մետաղների արտադրություն» և «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» ենթաոլորտների (որոնց նախորդ տարվա մեծ ծավալները պայմանավորված էին ոսկու վերաարտահանմամբ) համապատասխանաբար 73.8% և 69.2% անկմամբ, որոնց ընդհանուր նպաստումն արդյունաբերության նվազմանը կազմել է 17.7, իսկ մշակող արդյունաբերության անկմանը՝ 24.8 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության մյուս ենթաոլորտների շարքում էական նվազումներ են գրանցվել «խմիչքների արտադրություն», «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» և «հագուստի արտադրություն» ենթաոլորտների թողարկման ծավալներում՝ համապատասխանաբար 14.7%, 15.4% և 8.3%, որոնք մշակող արդյունաբերության անկումն արագացրել են 1.5, 1.3 և 0.2 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերությանը դրական նպաստում են ունեցել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն», «սննդամթերքի արտադրություն» և «մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում» ենթաոլորտները, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.4, 1.1 և 0.7 տոկոսային կետ: Մյուս ենթաոլորտների նպաստումները նշանակալի չեն եղել:

² Արդյունաբերության հուլիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է արագանալ: 2025թ. հուլիսին շինարարության աճը կազմել է 26.1%՝ հունիսի համեմատ արագանալով շուրջ 3.5 տոկոսային կետով: Աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են կազմակերպությունների և բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության աճով: Հունվար-հուլիս ամիսներին շինարարության աճը կազմել է 20.2%՝ 1.7 տոկոսային կետով բարձր լինելով հունվար-հունիս ամիսների ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %³



³ Ծառայությունների նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:


Ծառայությունների ոլորտի աճի տեմպը մնում է բարձր մակարդակում:

Ծառայությունների ոլորտում 2025թ. հուլիսին գրանցվել է 11.1% աճ՝ մայիսի համեմատ արագանալով 2.3 տոկոսային կետով: Հունվար-հուլիս ամիսների աճը կազմել է 10.6%՝ հունվար-հունիսի համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը հունվար-հունիս⁴ ամիսների տվյալներով, հիմնականում պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ինչպես նաև «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտների՝ համապատասխանաբար 16.5% և 19.0% աճերով, որոնց նպաստումները կազմել են 5.1 և 3.4 տոկոսային կետ: Աճին դրական նպաստում են ունեցել նաև մյուս ենթաօլորտները, բացի տրանսպորտային ծառայություններից, որտեղ շարունակել է գրանցվել շուրջ 11.9% անկում՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 1.3 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպն աստիճանաբար արագանում է: Առևտրի ոլորտում 2025թ. հուլիսին գրանցվել է 3.8% աճ՝ հունիսի համեմատ արագանալով 1.0 տոկոսային կետով: Կուտակային աճի տեմպը մնացել է նույն մակարդակում՝ հունվար-հուլիսին կազմելով 3.9%:

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալների նվազման տեմպը որոշակիորեն մեղմվել է, սակայն գրանցվում են կայուն բացասական ցուցանիշներ: 2025թ. հուլիսին արտահանման անկումը կազմել է 10.8%, իսկ հունվար-հուլիս ամիսների կուտակային անկումը՝ 48.3%: Անկման նման մեծ ցուցանիշները հիմնականում պայմանավորված են ոսկու վերաարտահանման նախորդ տարվա խոշոր ծավալների չեզոքացմամբ: **Թեև անկման տեմպն աստիճանաբար մեղմվում է, սակայն դեռևս մնում է բավական խոր մակարդակում:**

Արտահանման անկումը, ըստ հունվար-հունիս ամիսների ցուցանիշների⁶, ինչպես և ընթացիկ տարվա նախորդ ամիսներին, առավելապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (դա հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 77.0% նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 54.5 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման անկմանը նպաստել են նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «մանածագործական իրեր», որոնց ընդհանուր բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.67 տոկոսային կետ:

Արտահանմանը դրական նպաստում ունեցած ապրանքախմբերից նշանակալի է եղել «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի


⁵ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁶ Արտահանման հուլիս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արտահանման 31.9% աճը, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 1.7 տոկոսային կետ: 0.5-ական տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել նաև «բուսական ծագման արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճերը: Մնացած ապրանքախմբերի նպաստումներն արտահանման աճին բավական փոքր են եղել:

Եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա աճը կկազմի ընդամենը 1.7%: Այսինքն, առանց բազայի էֆեկտի, արտահանման աճն այդչափ ցածր է: Դա խոսում է վերջին տարիներին արտահանման պոտենցիալի կորստի մասին:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման անկման տեմպը նույնպես մեղմվել է, սակայն մնում է կայուն ցածր մակարդակում: 2025թ. հուլիսին ներմուծումը նվազել է 16.5%-ով (նույն ցուցանիշը գրանցվել է նաև հունիսի համար)⁷ նույնպես հիմնականում պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալների անկմամբ: Հունվար-հուլիս ամիսների ներմուծման կուտակային նվազումը կազմել է 35.8%:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-հունիս ամիսների ցուցանիշների⁷, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 78.8% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 43.0 տոկոսային կետ:

Ներմուծման աճին դրական նպաստում ունեցող ապրանքախմբերից առավել նշանակալի են եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և

⁷ Ներմուծման հուլիս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


«պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի դրական նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 1.3 և 0.9 տոկոսային կետ:

Եթե հաշվի չառնենք ոսկու վերաարտահանման ծավալների փոփոխության ազդեցությունները, ապա ներմուծման աճը հունվար-հունիսին կլինի դրական, սակայն բավական ցածր՝ 4.3%-ի չափ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁸

Անվանական աշխատավարձի աճը որոշակիորեն արագացել է նախորդ ամսվա համեմատ: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.6%-ով (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով)՝ կազմելով 294,621 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.5%-ով (հունվար-մայիսի աճը՝ 4.9%)՝ կազմելով 323,223 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի ցածր տեմպով՝ 4.8%-ով (նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 221,362 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-հունիսին, %



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2025թ. հուլիսին ՀՀ դրամի անվանական փոխարժեքը հարաբերականորեն կայուն է եղել: Հուլիսին ԱՄՆ դրամի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 384 դրամ՝ նախորդ ամսվա համեմատ մնալով նույն մակարդակում: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը նույնպես չի տատանվել՝ մնալով 4.9 դրամի սահմաններում: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը հուլիսին որոշակիորեն արժեզրկվել է՝ կազմելով միջինում 449 դրամ՝ հունիսի 443-ի համեմատ:


Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-հուլիս ամիսներին արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 1.2%-ով, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է համապատասխանաբար շուրջ 0.8%-ով և 4.4%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը կայուն է եղել հուլիսին: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը հուլիսին կազմել է 18.0%՝ հունիսի համեմատ մնալով նույն մակարդակում, իսկ հունվար-հուլիս ամիսների աճը կազմել է 15.6%՝ արագանալով 0.4 տոկոսային կետով: Բյուջեի այլ եկամուտները (ոչ հարկային) հունվար-հուլիսին ավելացել են 37.9%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները շարունակել են անկում գրանցել, որի չափը կազմել է 11.4%:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %




Հարկային եկամուտների աճը հունվար-հուլիսին փոքր չափով արագացել է՝ կազմելով 14.7%՝ հունվար-հունիսի 14.2%-ի համեմատ: Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 24.4%), շահութահարկը (աճը՝ 19.1%) և եկամտային հարկը (աճը՝ 10.0%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 7.0, 3.5 և 2.7 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. Հունվար-հուլիս		2025թ. Հունվար-հուլիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	5.5	5.5	14.7	14.7
Ավելացված արժեքի հարկ	-4.2	-1.3	24.4	7.0
Ակցիզային հարկ	-6.6	-0.4	20.8	1.0
Շահութահարկ	4.2	0.8	19.1	3.5
Պետական տուրք	22.4	0.6	19.2	0.6
Մաքսատուրք	2.2	0.1	0.6	0.0
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	104.0	2.1	-37.7	-1.5
Այլ հարկեր	8.9	0.3	-1.9	-0.1
Շրջանառության հարկ	16.3	0.4	26.3	0.8
Եկամտային հարկ	8.7	2.3	10.0	2.7
Սոցիալական վճարումներ	15.5	0.6	13.4	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը դանդաղել է: Ընդհանուր ծախսերը 2025թ. հուլիսին նվազել են 4.8%-ով՝ հիմնականում պայմանավորված կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) 42.7%

նվազմամբ: Այնուամենայնիվ, հունվար-հուլիս ամիսների ընդհանուր կապիտալ ծախսերն աճել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 51.9%-ով (հունվար-հունիսի աճը՝ 80.7%):

Հունվար-հուլիս ամիսներին ընդհանուր ծախսերի աճը կազմել է 15.2% (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 4.2 տոկոսային կետով), որին ընթացիկ ծախսերի աճի նպաստումը կազմել է 7.3, իսկ կապիտալ ծախսերինը՝ 7.4 տոկոսային կետ (ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 0.5 տոկոսային կետով):

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ




Եկամուտների և ծախսերի գծով վերոհիշյալ զարգացումների պայմաններում պետական բյուջեի դեֆիցիտն աճել է: 2025թ. հունվար-հուլիս ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 60.7 մլրդ դրամի չափով պակասուրդ՝ շուրջ 4.6%-ով (կամ 2.7 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

5.4. Պետական պարտք

2025թ. հուլիսի վերջի դրությամբ պարտքի աճի տեմպը շարունակել է արագանալ: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա հուլիսի համեմատ աճել է 14.3%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.9%)՝ կազմելով շուրջ 14.1 մլրդ ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 14.8%-ով (նախորդ ամսվա աճը՝ 14.5%)՝ կազմելով 13.6 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 16.2%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 11.9%-ով:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են նվազել: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. հուլիսին կազմել է 7.9%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 0.9 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսեր հուլիսին չեն տեղաբաշխվել: Փոխարենը տեղաբաշխվել են երկարաժամկետ պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը կազմել է 9.93%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով բավական փոքր՝ 0.03 տոկոսային կետով:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը ավելի է մոտեցել թիրախին: 2025թ. հուլիսին 12-ամսյա գնաճի տեմպը կազմել է 3.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.5 տոկոսային կետով: Այն գտնվում է կենտրոնական բանկի համար սահմանված նոր՝ $3 \pm 1\%$ թիրախային միջակայքում՝ 3% թիրախային կետին բավական մոտ: Այս պայմաններում, ԿԲ-ը հուլիսին որոշում է կայացրել վերաֆինանսավորման տոկոսադրույքը նույն մակարդակում պահելու վերաբերյալ:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը տատանողական է վերջին ամիսներին, սակայն ընդհանուր առմամբ պահպանվում է բարձր մակարդակում: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. հուլիսին նախորդ տարվա հուլիսի համեմատ աճել է 13.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.5 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 16.8% և 4.9%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2025թ. հուլիսին ավանդների աճին ամենամեծ նպաստումն է ունեցել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է 6.7 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը պահպանվում է բարձր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 27.9%-ով՝ պայմանավորված ռեզիդենտներին տրամադրված վարկերի 29.3% աճով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալը նվազել է 1.2%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 30.8%-ով, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 27.8%-ով, դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար 15.3 և 13.9 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁹




2025թ. հուլիսին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի են եղել սպառողական (աճը՝ 31.2%) և հիպոթեքային (աճը՝ 28.7%) վարկերի աճերը: Վերջիններս ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 7.0 և 6.3 տոկոսային կետով:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) նորից նվազել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. հունիսին կազմել է 75.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա կտրուկ աճից հետո, նույն չափ՝ կտրուկ նվազելով: Արդյունքում, հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ դրամական միջոցների զուտ ներհոսքը նվազել է՝ 1.3%-ով՝ կազմելով 587.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների 595.4 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպերը վերջին ամիսներին արագանում են՝ հիմնականում բազայի էֆեկտի չեզոքացմամբ պայմանավորված: Հուլիսին ՏԱՑ-ը շարունակել է արագանալ՝ հասնելով 9.1%-ի: Արագացումը հիմնականում պայմանավորված է նախորդ ամիսներին խոշոր անկումներ գրանցող արդյունաբերության ոլորտի աստիճանական վերականգնմամբ և շինարարության աճի արագացմամբ: Վերջինս, սակայն, կարճաժամկետ երևույթ է և առաջիկայում հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի ծրագրի՝ Երևան

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2025թ. հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

քաղաքում կասեցման պայմաններում պահանջարկի նվազումը կհանգեցնի նաև շինարարության ոլորտի աճի դանդաղմանը:

2. Արտահանման ոլորտում գրանցվում են կայուն բացասական ցուցանիշներ: Արտահանման անկման տեմպը որոշակիորեն մեղմվել է, սակայն մնում է բավական խոր անկման մակարդակում: Վերջին երկու ամիսներին՝ հունիսին և հուլիսին, արտահանման անկումը եղել է կայուն ցածր՝ կազմելով համապատասխանաբար 10.1% ու 10.8%, և չի ցուցաբերել վերականգնման միտումներ: Ավելին, եթե արտահանման աճից չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը, ապա աճը կկազմի ընդամենը 1.7%, որը բավական ցածր ցուցանիշ է և խոսում է վերջին տարիներին արտահանման պոտենցիալի կորստի մասին:

3. Վարկերի կառուցվածքը և աճի տեմպերը շարունակում են մտահոգիչ մնալ: Թեև վարկերի կառուցվածքում աճում են նաև տնտեսության իրական հատվածին տրվող վարկերի ծավալները, վարկերի ընդհանուր ծավալների էական մասն ուղղվում է հիպոթեքային, սպառողական վարկերի տրամադրմանը և շինարարության ֆինանսավորմանը: Ընդ որում, դրանք հիմնականում ֆինանսավորում են մեկ ոլորտ՝ շինարարությունը (քանի որ սպառողական վարկերի զգալի մասը նույնպես ուղղված է շինարարությանը՝ կանխավճարների տրամադրման, բնակարանների վերանորոգման և կահավորման ծախսերը հոգալու համար): Իսկ շինարարության բարձր աճը ժամանակավոր է, հետևաբար բնակչության եկամուտներից ավելի արագ աճող վարկային պարտավորությունները միջնաժամկետում կարող են ռիսկեր ստեղծել ֆինանսական կայունության տեսանկյունից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: